ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 դեկտեմբերի 2012թ. թիվ 254-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 239-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2012թ. նոյեմբերի 14-ի «Պետական բնակարանի անհատույց մասնավորեցման մասին» թիվ 239-Ա որոշումը լրացնել 3-րդ կետով՝

«3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2012թ. նոյեմբերի 14-ի թիվ 239-Ա որոշման հիման վրա 20.11.2012թ. կնքված թիվ 3485 անշարժ գույքի նվիրատվության պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը՝ «Պայմանագրի 3-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «ՆՎԻՐԱՏՈՒԻ» սեփականության իրավունքը հաստատված է համաձայն սեփականության իրավունքի գրանցման թիվ 2319920 տրված 25.06.2008թ. միասնական վկայականի:»:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. դեկտեմբերի 5
ք.Վանաձոր